

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՍՅԱՆ ԲԱՑՈՒՄ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Ինչպես հաղորդել ենք «Էջմիածին» ամսագրի նախորդ համարներում*, Սյունյաց թեմի հրավերով Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետը՝ ընկերակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի և այլ բարձրաստիճան հոգևորականների ու աշխարհիկ ուխտավորների, 1989 թ. ապրիլի 26—27-ին հայրապետական այցելություն տվեց Սյունյաց աշխարհ: Հայոց Կաթողիկոսի այցելությունը համաժողովրդական խանդավառություն առաջացրեց սյունեցիների սրտերում՝ դառնալով հավատքի վերազարթոնքի հզոր ազդակ: Այցելություն, որին սյունեցիները սպասում էին 86 տարիներ շարունակ: Վերջին անգամ հայոց կաթողիկոսներից Խրիմյան Հայրիկն էր այցելել Սյունիք՝ 1903 թ.: Եվ ահա կրկին սյունեցիների բաղձանքը դարձել էր իրականություն: Վեհափառ Հայրապետը նրանց մեջ էր, եկել էր նրանց հետ աղոթելու, Իր հայրական օրհնությունները բաշխելու:

Հինգ ամիս է անցել պատմական այդ այցելությունից, բայց յուրաքանչյուր սյունեցի մտովի վերապրում է Նորին Սրբության ներկայությունը, մինչև այսօր էլ ոգեշնչվում Նրա իմաստուն խոսքերով ու պատգամներով:

26 սեպտեմբերի.— Նորից տոն է Սյունյաց աշխարհում: Վաղ առավոտից բազմահարյուր սիսիանցիներ՝ խումբ-խումբ, մեծ ու փոքրով շտապում են դեպի Ս. Հովհաննես եկեղեցուց ոչ շատ հեռու գտնվող փոքրիկ հրապարակ: Արևի կենսապարգև շողերը Սիսիանը շրջափակող երկնամերձ

---

* Տե՛ս «Էջմիածին», 1989 թ., Դ-Ե-Զ:



Ֆրդինանդ Գերմանացի առջև

լեռների բարձունքներից աստիճանաբար իրենց ջերմությունն են տարածում քաղաքի վրա: Ծուտով հանդիսության վայր են գալիս նաև Սիսիանի շրջանային իշխանության ներկայացուցիչները՝ գլխավորությամբ շրջանի ղեկավար տիար Հենզել Առաքելյանի:

Ժամը 11-ն է: Սիսիան են ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը՝ Նյու Յորքից, ինչպես նաև այլ հոգևոր և աշխարհիկ անձինք: Սիսիան քաղաքի մուտքին նրանց դիմավորում և բարի գալուստ է մաղթում Սյունյաց թեմի հոգևոր դասը:

Հոգևոր երաժշտության քաղցրալուր հնչյունների ներքո սկսվում է Ամենայն Հայոց Հայրապետի այցելության առթիվ կանգնեցված հուշասյան բացման արարողությունը: Զայնը տրվում է Սիսիանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Հենզել Առաքելյանին: Շրջանի ղեկավարը իր խոսքում անդրադառնում է Հայոց Հայրապետի այցելության կարևոր նշանակությանը, վեր հանում Նորին Սրբության եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեությունը՝ ի մասնավորի նշելով. «Մենք դեռևս գտնվում ենք 1989 թ. ապրիլի 26-ի տպավորությունների ներքո: Այդ օրը Սիսիան ժամանեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը՝ ընկերակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի: Սիսական աշխարհ Խրիմյան Հայրիկից հետո հայոց կաթողիկոսներից և ոչ ոք չէր այցելել: 86 տարվա ընդմիջումից հետո, այս անգամ արդեն մեր լեռնաշխարհ, մեր ժողովրդին միանգամից այցի եկան երկու կաթողիկոսներ: Դա մի պատմական իրադարձություն էր, որ ընդմիշտ կմնա մեր ժողովրդի հիշողության մեջ: Պատմությունը՝ պատմություն, բայց այդ այցը նաև խորին խորհուրդ ուներ: Դա վերջին շրջանում մեր ժողովրդի բոլոր հատվածների միասնության ձգտումների արտահայտություններից մեկն էր: Իսկ այդ միասնությունը խիստ անհրաժեշտ է հատկապես այսօր, մեր ժողովրդի համար լարված ու ծանր այս ժամանակահատվածում:

...Սյունյաց աշխարհը ոչ միայն ծանր ու լարված օրեր է տեսել, այլ նաև դաժան արհավիրքներ: Սակայն միշտ պահպանվել է հայոց ոգին, կորովը: Ամենադժվարին ժամանակահատվածներում անգամ չեն մարել շինականի երգը, քարագործ-վարպետների մուրճի աշխարհաշեն հնքը: Այսօր էլ շարունակվում է մեր նախնիների քարագործ արվեստը բազում տաղանդաշատ վարպետների շնորհիվ:

Կաթողիկոսների այցից անցել է ուղիղ հինգ ամիս: Այդ այցը աննկատ չի մնացել մեր ժողովրդի ուշադրությունից: Երախտապարտ սիսիանցիները այդ այցը հավերժացնելու, այն պատմությանը հանձնելու նպատակով կերտել են մի նոր հուշարձան, որը ոչ միայն նրանց այցի հավերժացման, այլ նաև նրանց անձի գնահատման հաստատումն է: Հուշարձանը կերտել է քարագործ-քանդակագործների գերդաստանի ժառանգ Վաղինակ Վարդանյանը, որին էլ տրվում է հուշասյունը բացելու պատիվը»:

Բացման խոսքից հետո շուրջ 10 հազար ժողովրդի ուրախ հայացքների ու ծափերի ներքո հանվում է հուշասյունը ծածկող ճերմակ սավանը, և բոլորի աչքերի առաջ վեր է խոյանում շուրջ 5 մետր բարձրություն ունեցող բազալտակուռ գեղեցիկ կոթողը: Կոթող, որ այսուհետ մարմնավորելու է սյունեցիների որդիական սերն ու հավատարմությունը հանդեպ Հայոց առաքի-

Կոլտնտեսության աշխատանքային ամենաբարձր ցուցանիշներ ունեցող տրակտորային բրիգադի անդամներ



նազարդ Հայրապետի: Հուշասյան վերնամասում ամրացված է Քրիստոսի արնակարմիր խաչը, որպես խորհրդանիշ հայ ժողովրդի հերոսական ու մաքառումներով լի պատմության, հայոց հավատքի հավերժության ու անսասանության: Հուշասյան արձանագրությունը վկայում է. «Երախտապարտ սիսիանցիներս կանգնեցրինք այս հուշասյունը ի նշանավորումն հայրապետական օրհնաբեր այցելության Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ընկերակցությամբ Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի: Ի թվին հայոց ՌՆԼԸ»՝ ապագա սերունդներին ավանդելով պատմական մի մեծ փաստ ևս:

Այնուհետև Ս. Խաչի խորհուրդը փառաբանող հոգեզմայլ շարականների երգակցությամբ տեղի է ունենում հուշասյան օրհնության արարողությունը, որից հետո խոսք է առնում Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը.

«Խաչի քո Քրիստոս, երկիր պագանեմք».

Սիսական աշխարհի ազնվազարմ ժառանգորդներ, այսօր կրկին տոն է Սյունյաց թեմում: Եկել ենք միախորհուրդ և համատեղ բացման արարողությունը կատարելու այս հուշասյան, որը պիտի հանդիսանա նշանավորումը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի Սյունիք այցելության: Վեհափառ Հայրապետի այցելությունից անցել է ընդամենը հինգ ամիս, և դուք այդ ընթացքում կանգնեցրիք այս հուշասյունը՝ որպես երախտագիտության արտահայտություն ձեր սիրեցյալ Կաթողիկոսի հանդեպ: Հուշասյան տեղը պատահական չէ, որ մենք ընտրեցինք այստեղ, դեպի եկեղեցի առաջնորդող այս փոքրիկ փողոցի սկզբնամասում: Տեղը արբազան է և պատմական: Իր Սյունիք այցելության ընթացքին Խրիմյան Հայրիկը 1903 թ. ուխտի և աղոթքի է եկել Սիսավանի տաճար, իջել է այստեղ և համբուրել այս պատմական և բազմաչարչար հողը: Այս արբավայրում այսօր վեր է հառնել այս գեղեցիկ հուշասյունը՝ իր գագաթին կրելով Քրիստոսի քառաթևյան արյունաներծում տուփակերտ խաչը: Բազալտե այունը արտահայտում է հայ ժողովրդի դյուցազնական ոգու ամրությունը, իսկ կարմրագույն խաչը՝ հայ ժողովրդի հավատարմությունը իր հավատքին:

Քրիստոսի էջքից հետո հայ ժողովուրդը հավատարիմ մնաց Իջման սեղանի նախախնամող խորհրդին: Այդ խորհուրդը շարունակում է իր շնորհները բաշխել Հայոց աշխարհի բոլոր կողմերում: Այսօր այդ խորհրդի վավերական ու տեսանելի արտահայտություններից մեկն էլ այս հրաշակերտ հուշասյունն է:

Թող մեր Փրկչի հրաշագործ խաչը միշտ հովանի լինի Սյունյաց աշխարհին և նրա քաջամարտիկ զավակներին: Ամեն»:

Արարողության ընթացքում, ըստ նախապես պատրաստված հայտագրի, խոսք են առնում նաև Սիսիանի մտավորականության և երիտասարդության ներկայացուցիչներ: Զայնը տրվում է Սիսիանի շրջանի Ուզի ավանի գյուղական խորհրդի նախագահ Ալբերտ Ավետիսյանին: Նա վեր է հանում Սյունյաց աշխարհի փառահեղ պատմությունը, նշում, որ այսօր ևս նրա ժողովուրդը շարունակում է իր հերոսական նախնիների ավանդույթները, վառ պահում նրանց ժայռակուռ ոգին. «Սյունեցի լեռնականը խաղաղ օրերին վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, պարիսպներ, ամրոցներ և այլ հրաշալիքներ է կառուցել ու մեզ ավանդել: Այսօր այդ հրաշալիքները համալրվեցին ևս մեկ բացառիկ քարեղեն մասունքով՝ սուրբ գավազանով, որը կժա-



Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու դարպասի վերնամասի կամարների տակ

ռանգեն գալիք սերունդները որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի սուրբ առաքելության վառ հիշողություն:

... Իսկ երբ մահացու վտանգն է կախվել հայրենի լեռնաշխարհի վրա, քաջակորով այուներցին լեռնային արծվի նման թառել է բարձրաբերձ ամրոցներում ու մահվան կրակ թափել թշնամիների գլխին, դարձել է Մխիթար Սպարապետ ու Դավիթ Բեկ, իսկ խաղաղ օրերին՝ Պետրոս Սյունեցի ու Մաթուսաղա, Սահակադուխտ ու Ստեփանոս Սյունեցի, Իսրայել Օրի ու Նիկողայոս Ադոնց:

Սիրելի հոգևոր բարեկամներ, դուք որքան հպարտ պետք է լինեք, որ գտնվում եք պատմական Սյունիքի հոգևոր ու վարչական կենտրոնում, Փառանձեմ թագուհու հայրենիքում, ուր ժամանակին կաթողիկոսական օրհնությամբ հիմնադրվեց ամբողջ Հայաստանում երկրորդ բարձր տիպի դպրոց-վարդապետարանը: Դա պատմական Ծաղաթում գործող Սյունյաց վարդապետարանն էր, որը դարձավ հոգևոր մշակույթի ու կրթության այն ավազանը, ուր վերամկրտված սյունեցի հեթանոս ոգին նույն ավանդական սիրով փարվեց քրիստոնեությանը և խանդոտ խնամակալությամբ հավատարիմ մնալով իր ազգային դիմագծին, հարատև պայքար մղեց ազգային ամեն մի ճնշման, ազգակործան ամեն մի քաղաքականության դեմ»:

Այնուհետև ելույթ է ունենում Սիսիանի երրորդ միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Անուշ Մարգարյանը, որը խոսելով հավատքի և Հայ Եկեղեցու անուրանալի դերի և նշանակության մասին մեր ժողովրդի ողջ պատմության ընթացքում, նշում է. «Հավատ է ունեցել իմ ժողովուրդը և հավատի տներ է կառուցել բարձրադիր ժայռերի ծերպերին, կերտել եկեղեցիներ, զարդարել քանդակներով, վանքեր է կառուցել ու դպրոցներ, դաբունապետեր է տվել ազգին: Եկեղեցին մեզ հայ է պահել ամբողջ դարեր: Հավատն առ Աստված պահել է ազգը, ազգ, որ հավերժի ճամփորդն է: Նա եղել է, կա ու կհավերժի դարեր»:

Հատկապես հուզիչ էր 9-րդ դասարանի աշակերտուհի Լիանա Գրիգորյանի խոսքը.

«Քսաներորդ դար, դար, որը հայ ժողովրդին բերեց Եղեռն, Նախիջևանի ցավալի կորուստ, ղարաբաղյան ազգային զարթոնք, փոքրիկ ու մեծ ֆիզիկական ու հոգեկան սումգայիթներ:

Քսաներորդ դար. և նորից հայը կերտում, նորից հայը գոյատևում է, նորից հայը ծնունդ է տալիս իր հոգևոր և նյութական Զվարթնոցներին:

Քսաներորդ դար. դար վերածնության:

Հայը վերածնվել է, որովհետև անաղարտ է պահել իր հոգևոր աշխարհը, հայը վերածնվում է, որովհետև մոռացության մոխրից այսօր վեր է հանել իր ազգային կրոնը՝ հայ քրիստոնեությունը:

Սյունյաց սրբազան ու հնամենի հողում այսօր իր քարակերտ մարմնացումն է ստացել հարգանքը առ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը: Երբ Մեծն Մուշե Կաթողիկոսը եկավ Սյունիք, նրան նստեցրին Սյունյաց իշխանների ոսկեկուռ գահի վրա: Հերոսական Սյունիքն այսօր չունի իշխանական գահ, և իր սիրելի Կաթողիկոսին նա նստեցրել է ժողովրդական սիրո թելերով հյուսված անձեռակերտ գահին, նա սիրելի Կաթողիկոսին ընդունել է իր հպարտ, անկուն հոգու մեջ և որպես հավերժական մարմնացում, ի պատիվ կաթողիկոսության շնորհի, որ այցելել ու սրբագործել է մեր հողը, մեր ժողովուրդը քարակերտ մարմնավորում է տվել իր հոգու շնորհակալությանը:

Ո՞վ անցորդ, ակնածանքով նայիր այս գավազան-այուին, այս կարմրակուռ բարձրադիր խաչին, որովհետև հողի այս փոքրիկ պատառը արժանացել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի այցելությանը: Մեր հոգիները մեր լեռների պես հպարտ են այսօր, որովհետև մենք ընդմիշտ մեր գիրկն ենք ընդունում յուրաքանչյուր հայի համար պատվաբեր, իր մեծերից մեկի պատվին կանգնեցված հուշարձանը»:

Արարողության ավարտին խոսքը տրվում է Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանին: Սրբազան հայրը նախ Ամենայն Հայոց Հայրապետի սերն ու օրհնությունն է փոխանցում հավաքվածներին՝ նշելով. «Այսօր, այս նվիրական պահուն, այս մեր ուխտագնացության պահուն սուրբ և սրբազան, իմ տկար շուրթերուն կտրվի բախտը, պատիվը և գոհունակությունը ողջունելու ձեզ բոլորդ, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Առաջին Սրբազնագույն Կաթողիկոսի: Ոչ միայն ողջունելու, ոչ միայն Իր հայրական օրհնությունները բաշխելու ձեզի, այլ Իր սերը, գուրգուրանքը փոխանցելու բոլորիդ: Գիտեք, այս օրերուն լրացավ Վեհափառ Հայրապետի ծննդյան տարեդարձը: Ցուտով, քանի մը օր հետո, հոկտեմբերի 1-ին, մենք պիտի տոնենք Վեհափառ Հայրապետի Լուսավորչի գահ բարձրանալու 34-րդ տարեդարձը: Ես կկարծեմ, որ այս տխուր, այս ալեկոծ օրերուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի միակ մխաթարանքը պիտի ըլլա Սյունյաց աշխարհի այս պարգևը՝ Իր ծննդյան, Իր գահակալության տարեդարձներուն առիթով: Այս հուշարձանը Սյունյաց աշխարհի, բազմաթիվ, բազմահազար հուշարձաններու կողքին, անդրանիկ հուշարձանն է մեր Աղետեն՝ երկրաշարժեն հետո, որպես կենդանության, պայծառության և հավերժության խորհրդանիշ:

Ամենայն Հայոց Հայրապետի ոչ միայն օրհնությունը, այլև գնահատանքը կբերենք ձեզի բոլորիդ, հատկապես ձեր քանդակագործ-ճարտարապետին, որպեսզի, արիացած նոր թափով, նոր եռանդով կարողանա ավելի գեղեցիկ հուշասյուներ շինել: Վեհափառ Հայրապետի սերը, գուրգուրանքը և օրհնությունը նաև վարիչ բոլոր մարմիններուն: Թեև նա ֆիզիկապես բացակա է այսօր, բայց մեր համեստ ներկայությամբ Ամենայն Հայոց Վեհափառը այստեղ է: Ֆրանսացին գեղեցիկ խոսք մը ունի. «Ուր որ դրոշակն է, այնտեղ իմ հայրենիքն է». Ուր որ Ամենայն Հայոց Հայրապետն է, այնտեղ Սուրբ Էջմիածինն է՝ ըլլա ատիկա Արցախ, Գանձասար, Սյունյաց աշխարհ կամ արտասահմանյան որևէ երկիր»:

Ապա Տիրայր սրբազանը տալիս է նաև իր պատգամը. «Մենք, որպես հոգևոր դեսպաններ, մեր ժողովրդին քրիստոնեություն կքարոզենք և կխոստանանք արքայություն, դրախտ: Դուք, Սյունյաց աշխարհի հայ բնակիչներ, մեր երկրավոր կյանքին մեջ ևս կապրիք դրախտավայր աշխարհի մը մեջ, և ձեր հավատքը, ձեր հայրենասիրությունը, ձեր ձորերուն, ձեր կիրճերուն նման խորունկ է: Մենք մեր փառավոր արյունով մարդկության գրեցինք մեր պատմությունը: Մենք ավելի պարտվեցանք, քան հաղթեցինք, բայց ո՞ւր են հաղթողները. չկան անոնք, անոնք պատմության փոշիներուն մեջ կհանգչին: Իսկ պարտված հայ ժողովուրդը կմնա և կտևե: Մենք աշխարհին սորվեցուցինք գերագույն դասը այս առումով:

Հայ ժողովուրդի պատմության մեջ երեք թվականներ կան անմոռանալի: Առաջինը մեր ոգիի անկախության տոնն է՝ 301 թ., 1700 տարիներ առաջ, երբ Ատված **հայացավ,** և հայ ժողովուրդը ազատագրվեցավ օտար աստվածներեն: Այս առաջինն էր, մեր հոգիի վերածնունդը: Հազիվ դար մը

անցած, մենք ունեցանք մեր մտքի վերածնունդը՝ այբուբենը, մեսրոպյան մեր քաղցրիկ լեզուն: Մեր զենքը, մեր գերագույն զենքը եղավ հայոց լեզուն: Ռոխը խլեց մեզմե ամեն ինչ, նույնիսկ հայրենիք արբազան, բայց ոչ մեկ ուժ այս արևուն տակ չկրցավ հայ ժողովուրդի հոգիեն խլել երկու առաքինություններ՝ հայոց լեզուն և հայոց քրիստոնեական հավատքը: 451 թ. տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը, ֆիզիկական ու հոգեկան ազատագրման ճակատամարտը: ...Ղևոնդ Երեց և Վարդան Մամիկոնյան ձեռք-ձեռքի տվին Ավարայրին դաշտի վրա: Այսօր աշխարհի որևէ զորավար պիտի նախանձի Վարդան Սպարապետի արտասանած ճառին հայրենասիրական ոգիին, որուն մեկ տողը կուզեմ հիշեցնել ձեզի: Իր զինակիցներուն ուղղելով խոսքը՝ Սպարապետ Վարդան քաջը կըսե. «Շատ անգամ հաղթեցինք, պարտվեցանք, ... բայց եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Ահա նշանաբան մը, պատգամ մը, որ 1500 տարիներ Ավարայրեն մեզի կուգա՝ մեզ ներշնչելու, ոգեշնչելու, քրիստոնյա և հայ պահելու համար:

Սիրելի հայրենակիցներ, ես նոր եմ եկած արտասահմանեն: Վեհափառը ինձ պատվիրեց Իր Հայրական ողջույնը փոխանցելու ձեզի բոլորիդ: Ես եկա նաև լիցքավորվելու: Թեև այսօր մեր հայրենիքը վիրավոր է, թեև մենք կնմանինք հոգնած, ծերացած արծիվներու, սակայն կենդանանալու համար, աշխուժանալու, երիտասարդանալու համար մենք կարիք ունինք հայ հայրենիքի, թեկուզ վիրավոր, որպեսզի այստեղեն խանդավառված, չերմացած և հայացած վերադառնանք մեր աշխարհները, որպեսզի այնտեղ հայությունը չքարանա, չօտարանա, չձուլվի, հիշե իր այբուբենը, աղոթե միշտ հայերեն, երգե միշտ հայերեն:

...Սիրելի՛ հայեր, ուխտենք նվիրական այս սուրբ պահուն, որ պիտի չծուլանանք, պիտի չդադրինք հայ քրիստոնյա անվանվելե: Ձեր պապերուն օրհնության կարիքը չունիք, այլ ավելի վախցեք ձեր պապերուն, ձեր նախնիքներուն անեծքեն: Այնպես մը ապրեցեք, որ չարժանանաք ձեր նախնիքներու անեծքին: Այս իմաստով է ահա իմ օրհնությունը և սերն ու գուրգուրանքը բոլորիդ: Հայ էիք երեկ դուք, հայ եք այսօր, հայ պիտի շարունակեք ապրիլ հավիտյանս հավիտենից. ամեն»:

* *
*

Նույն օրը Մայր Աթոռից ժամանած հոգևոր և աշխարհիկ հյուրերը իրենց մասնակցությունն են բերում նաև Սիսիան քաղաքի նորակառույց զբոսայգու բացման հանդիսությանը, զբոսայգի, որ տարածվում է քաղաքի գեղատեսիլ մասերից մեկում, Որոտան գետի հարևանությամբ: Որոշ աշխատանքներից հետո «Երևանյան» անունը կրող զբոսայգին կդառնա սիսիանցիների հանգստի լավագույն վայրերից մեկը:

Զբոսայգում հավաքված բազմահազար ժողովրդին իր սրտի խոսքն է հղում նաև Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը.

«Սիրելի հայրենակիցներ, ձեզնից ոմանք թերևս զարմանան, թե եկեղեցականները ինչ գործ ունեն այստեղ, այս աշխարհիկ արարողության հետ: Բայց չէ որ հայ եկեղեցականն էլ հայ ժողովրդի ծնունդ է, չէ՞ որ նա էլ ապրում է իր ժողովրդի ցավերով և ուրախությամբ: Հետևաբար, եթե

մենք ձեզ հետ միասին ենք ձեր տխրություններին մեջ, նաև ձեզ հետ միասին պետք է լինենք ձեր ուրախություններին մեջ:

Այսօր, երբ մի գեղեցիկ բան է ավելանում Սիսիանի բնության այս ծոցում, այդ գեղեցիկ երևույթը մեզ համար թանկ և կարևոր իրողություն է, ինչքան էլ փոքր լինի այն, թեկուզ մի քանի ծառ, թեկուզ մի փոքր ավազան: Դա մեզ՝ հայերիս համար շատ ավելի կարևոր երևույթ է, քան այն բոլոր երևույթները, որոնք հրաշք կարող են թվալ մեզ արտասահմանում: Այն, ինչ դրսում է, մեզ կարող է հետաքրքրել միայն, բայց մեզ չի կարող հուզել: Իսկ այն, ինչ այստեղ է կերտվում, մեզ հուզում և ոգևորում է. չէ՞ որ ամեն մի թիզ հողը այստեղ մեր նախնիների արյունով ու քրտինքով է ներծծված: Եվ այդ հողը մենք իրավունք չունենք թողնելու ուրիշներին: Եթե անցյալում մեր թագավորները սոսյաց անտառներ էին տնկում, այսօր էլ մեր կառավարությունն այստեղ, ժողովրդի հետ միասին, ստեղծում է գեղեցիկ, տեսարժան վայրեր, որտեղ մեր ժողովուրդը կարող է գալ և զգալ բնության գեղեցկությունը, թեկուզ մի պահ մոռանալ ներկայի դժվարությունները, հաղորդվել իր նախնիներին, հոգևին զօրանալ և մտածել ապագայի մասին: Հուսով եմ, որ այս գեղեցիկ վայրը, որ ձեր ժրաջան բազուկների, ձեր քրտինքի արդյունքն է, սկիզբը կլինի Սիսիանի գեղեցկացման, որպեսզի այս երեխաները, որ այստեղ են, երբ որ մեծանան, ուրախ և հպարտ զգան իրենց ունեցածով և ցույց տան ողջ աշխարհին, որ եթե իրենց նախնիք ժամանակին վանքեր ու եկեղեցիներ են կառուցել, այսօր իրենք էլ, որպես նրանց արժանավոր ժառանգորդները, կարող են շարունակել նրանց այդ գեղեցիկ ավանդությունը»:

Հավարտ արարողության Սիսիանի քաղաքային իշխանությունների կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որից հետո հոգևոր հայրերն ու նրանց ուղեկցող աշխարհիկ ուխտավորները այցելում են Սիսիանի մի շարք տեսարժան վայրեր, իրենց աղոթքն են կատարում Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցում և հոգեկան մեծ բավարարվածությամբ վերադառնում Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ՍԵՐՈՎԲԵ ԱԲԵՂԱ ԻՍԱԽԱՆՅԱՆ